ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08-ը հունվարի 2018թ.

Ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/9» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/9» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ռ. Մարդոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «**Էլեկտրական սարքերի վերանորոգման և պահպանման**» ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/9» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/h	Մասնակիցների անվանում	Հասցե
1	«Սինխրոն» ՍՊԸ	ք. Երևան, Արցախի 73
2	«Ա-2» ՍՊԸ	ք. Երևան, Շրջանային 2/2
3	«ՎԱԼՄԼ» ՍՊԸ	ք. Արմավիր, Շահումյան 13/1
4	Ա/Ձ Գրիգոր Այվազյան	Արարատի մարզ, գ. Ոստան, Թեիլերյան 14

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ռ. Մարդոյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում 16.01.2018թ., ժամը 14:50-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են.

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին)՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

Ա/Ձ Գրիգոր Այվազյան կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի 7.1 կետի պահանջներին. վճարման պահանջագրում նշված գումարը պակաս է առաջարկվող չափաբաժնի համար հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսից,

«ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի կողմից տուժանքի մասին համաձայնությանը (Հավելված N 8) կից ներկայացված վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերով դրա համար նախատեսված լրացման կարգի 13-րդ կետի պահանջներին (արժույթը լրացված չէ),

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ հանձնաժողովը որոշեց «ՎԱԼՄԼ» և «Սինխրոն» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Մ	Ծառայության անվանումը	«Ա-2» ՍՊԸ		«ՎԱԼՄԼ» ՍՊԸ		«Սինխրոն» ՍՊԸ -ի առաջարկած գին /դրամ/		Ա/Ձ Գրիգոր Այվազյան ի առաջարկած գին /դրամ/		1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ
		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	Հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	56,155	67,386							«Ա-2» ՍՊԸ
2	Պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ					805,200	966,240			«Սինխրոն» ՍՊԸ
3	Խորքային պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություններ			991,850	1,190,220			990,450	990,450	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր

Ներկայացված են առանձին տեսակի ծառայությունների համար առաջարկվող միավորի գների հանրագումարի արդյունքում մասնակիցների առաջարկած գները:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Սույն ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

4.1 18.01.2018թ (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Ա-2» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «Սինխրոն» ՍՊԸ:

4.2 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

4.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԾՁԲ 10/9» ծածկագրով ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԾՁԲ 10/9» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության ներկայացման վերջնաժամկետի օրը ժամը 11[00] ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Գնահատող(ԳԱՊ)	Ս. Աբովյան
Գնահատող	Մ. Խալաթյան
Գնահատող	Հ. Բաղալյան
Գնահատող	Ա. Մանուկյան
Գնումների [illegible]	Ռ. Մարդոյան

18.01.18թ.